Ամեն տուն ուներ ձեռքի երկանաքարեր՝ արկանք թե՛ ցորեն և գարի և թե՛ մանավանդ աղն աղալու համար։ Քիչ թե շատ մեծաքանակ հացահատիկ աղալը տեղի էր ունենում ջաղացում՝ ճրղացում։ Ջաղացը, Հայկական լեռնաշխարհի այս մասումն էլ իր էական մասերով նույն, տուրբինանման ջրի ուժով աշխատող սարքավորումն էր՝ հորիզոնական պտտվող անիվով։ Այս սարքավորումը մշակվել է լեռնաշխարհում, ինչպես և նրան անմիջապես կից երկրներում, շատ վաղեմի ժամանակներից և առանձնապես զարգացած է եղել ուրարտական թագավորության մեջ, ինչպես դրա բարձրագույն կատարելության հասցրած օրինակներն ունենք Հասան-քյոյի՝ Արևմտյան Տիգրիսի ափին բազմահարկ ջաղացներում։ Խալդ-ուրարտացիներին այս երկրում հաջորդած հնդևրոպացիք մտել են կամ իրենց հին հայրենիքում դեռ հողմաղացին անծանոթ լինելով, կամ եթե ծանոթ են եղել՝ այդ հին սովորությունից վեր են դասել տեղական ձևը և իրենց հողմաղացը բոլորովին անհետ մոռացել, ինչպես շատ նոր ժամանակներում Ռուսաստանից Անդրկովկաս վերաբնակված գյուղացիք թողել են իրենց հայրենի մտրակ-փայտերով[76] ծեծելը՝ կալսելը և տեղացիներից փոխ են առել կամնով կալսելու եղանակը։ Ջանգեզուրում հողմաղացին բոլորովին անծանոթ են։

Ջանգեզուրի ջաղացները[77] գետից հանած առվի վրա շատ պրիմիտիվ ձևով կառուցված խղճուկ շենքեր էին, կիսով չափ գետնի մեջ թաղված։ Այդպիսիք էին օրինակ՝ Սիսիանի (Սիսավանի), Գեղվա ձորի, ինչպես նույնիսկ Տաթևի ջաղացները։ Միայն Գորիսի ձորում նոր կառուցվածներն արդեն ունեին կանոնավոր շարված պատեր և տանիք։ Սովորաբար ծածկը հողի հաստ շերտն էր։ Այս գավառում չկային այն հոյակապ միասնական քարերից կազմված գլանակ-խողովակները, որոնցով պարծենում էր Շիրակում Արթիկի շրջանը։

Ջուրը Ջանգեզուրի ջաղացներում անիվը պտտեցնելու համար հոսում է մեջը փոսացրած ամբողջական գերանի կամ իրար մեխած տախտակներից կազմված ճօվէրի միջոցով։ Մոտեցողն արդեն հեռվից լսում էր շախշախի անընդհատ չխկչխկոցը և ջաղացաքարերի խուլ ղրղղրոցը, տեսնում էր դռանը մեկ-մեկ երևացող, ալյուրից սպիտակած ջաղացպանին, բեռներն իջեցնող և բարձող ջրղրցա՛վուրնէրին[78], ճրղցվօրնէրին՝ պատվիրատուներին, նրանց էշերին, ջորիներին, ձիերին, երբեմն նաև եզներին։ Վերջիններին հացահատիկի ջվալներով բարձելը, մանավանդ ադրբեջանական բնակչության մեջ, բավական տարածված սովորություն էր։ Ջաղացպանին վճարում էին վարձ՝ շահատ— ձիու բեռնից՝ երեք կոյշ, էշի բեռնից՝ երկու կոյշ։ Ջաղացները պատկանում էին մասնավոր անհատներին կամ ավելի հաճախ՝ անբաժան ընտանիքներին։ Հասարակական ջաղացներ գրեթե չէին հանդիպում։

Ջաղացի առանձին մասերը կրում են փոքր բացառությամբ հայկական անուններ։ Հացահատիկի շուռ տված բրգաձև արկղը՝ դօղ՝ դող, տակը հացահատիկ ընդունող մակույկը՝ շրռուրկան[79], որին միացած է չախշախը։ Չախշախը ստորին ծայրով քսվում է ճրղացրքարին։ Ստորին երկանաքարը տրկաքարն է, վերինը՝ ճրղացքարն է։ Պատրաստի ալյուրը թափվում է

[76] Цепами.

[77] 1886 թ. Ջանգեզուրում կար 255 ջաղաց։ Зелинский С. П., նշված աշխ., էջ 122.

[78] Մեղրու բարբառով։

[79] Թրքերեն՝ քաշկուլ։